ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԲՐՈՇՅՈՒՐ

GEFF Green Economy Financing Facility

European Bank for Reconstruction and Development

ՁԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ Է՝ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ, ԱՎԵԼԱՑՆԵԼ ՎԱՃԱՌՔՆԵՐԸ, ԱՋԱԿՑԵԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒ ՆՊԱՍՏԵԼ ԵՐԿՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ

Արտադրո՞ւմ կամ վաճառո՞ւմ եք բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են էներգիայի, ջրային կամ այլ ռեսուրսների տնտեսմանը:
Այդ դեպքում շարունակեք ընթերցել, քանի որ Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագիրը (GEFF) Ձեզ համար է:

Դոնորներ՝

Federal Ministry Republic of Austria Finance

GREEN CLIMATE FUND

ԻՆՉ ԷՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՄԱՆԱԼ GEFF-Ի ՄԱՍԻՆ

- GEFF-ը Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) կողմից մշակված մի ծրագիր է, որից շահում են տնտեսությունը, շրջակա միջավայրը, բիզնեսներն ու տնային տնտեսությունները:
- Այն գործում է աշխարհի 27 երկրների 155 գործընկեր ֆինանսական կազմակերպությունների (ԳՖԿ) միջոցով և ներառում է ՎԶԵԲ-ի ավելի քան 5 մլրդ եվրո ֆինանսավորում:
- GEFF-ի կողմից ֆինանսավորված ավելի քան 202,000 ներդրումների արդյունքում տարեկան կրճատվում է ավելի քան 9 մլն տոննա ածխաթթու գազի արտանետում:
- Բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաների վարգացումը հանգեցնում է կանաչ ներդրումների նկատմամբ պահանջարկի աճին, որոնք և ֆինանսավորվում են GEFF-ի կողմից:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՁԵՐ ԲԻԶՆԵՍՆ ՕԳՏՎԵԼ GEFF-Ի ԸՆՁԵՌԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

- Ձեր ընկերության կողմից առաջարկվող բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաները ներկայացնելով GEFF-ի Տեխնոլոգիաների ցանկում,
- Օգտվելով բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաների նկատմամբ աճող պահանջարկից,
- Բարձրացնելով Ձեր բիզնեսի ճանաչելիությունը և ձեռք բերելով նոր հաճախորդներ,
- Բարելավելով վաճառքներն ու եկամուտը,
- Ամրապնդելով Ձեր ընկերության հեղինակությունը,
- Ստանալով անհրաժեշտ խորհրդատվություն:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՁԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐՆ ՕԳՏՎԵԼ GEFF-Ի ԸՆՁԵՌԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

- Կարող են ստանալ նպատակային ֆինանսավորում՝ բարձր արդյունա-վետությամբ տեխնոլոգիաներում ներդրում կատարելու համար:
- Էներգաարդյունավետ ներդրումների միջոցով կարող են բարձրացնել արդյունավետությունն ու որակը, ինչի արդյունքում կբարձրանա նաև եկամտաբերությունը:
- Որոշ տեսակի ներդրումների պարագայում կարող են ստանալ նաև ֆինանսական պարգևատրում:

ԻՆՉ Է ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ (ՏՑ) ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ԱՅՆ ԳՈՐԾՈՒՄ

- ՏՑ-ն առցանց հարթակ է, որում ներկայացված տեխնոլոգիաները բավարարում են GEFF-ի ֆինանսավորման պահանջները, հետևաբար դրանց վարկավորման որոշումը կայացվում է կարճ ժամկետներում:
- Ցանկում ներառված բոլոր միջոցներն ապահովում են էներգիայի և ռեսուրսների խնայողություն:
- Մատակարարները կարող են ավելացնել իրենց կողմից առաջարկվող համապատասխան ապրանքատեսականին ցանկացած ժամանակ:
- Այն վաճառքների նոր աղբյուր ու տեխնոլոգիաների անվճար խթանման հնարավորություն է:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՑԱՆԿԻՑ

Գործընթացը շատ պարզ է.

ՔԱՅԼ 01

Գրանցվե՛ք
որպես Մատակարար
techselector.com/armenia

ՔԱՅԼ 02

Ներբեռնե՛ք
համապատասխան տեխնոլոգիաներն առանձին-առանձին կամ միասին
*թարմացրեք ցանկացած պահի

ՔԱՅԼ 03

Ներկայացրե՛ք
գլոբալ արտադրողի տեխնոլոգիաները որպես լոկալ ներկայացուցիչ

ՔԱՅԼ 04

Վաճառե՛ք
Ձեր տեխնոլոգիաները GEFF-ի ֆինանսավորմամբ գնորդներին

ԻՆՉ ԿԱՐԾԻՔ ՈՒՆԵՆ GEFF-Ի ՄԱՍԻՆ ԱՅԼ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԸ

«Լինելով ջեռուցման և հովացման համակարգերի, ինչպես նաև շինարարական ապրանքների ներկրող, մանրածախ ու մեծածախ վաճառող՝ միանշանակ կարող ենք ասել, որ շահել ենք GEFF-ի հետ համագործակցությունից. մենք ձեռք ենք բերել բազմաթիվ նոր հաճախորդներ, քանի որ վերջիններս կարողացել են օգտվել ՎԶԵԲ-ի ֆինանսավորման ծրագրից և իրենց գնման որոշումները կայացրել են շատ արագ»:

Արմեն Ոսկանյան, Կոմերցիոն տնօրեն, **ԲԱՐՍԻՍ ՍՊԸ**

«Մենք բարձր ենք գնահատում GEFF-ի հետ համագործակցությունը, որի շնորհիվ հիմա կարող ենք կյանքի կոչել անգամ խոշորամասշտաբ նախագծեր, օրինակ՝ տարածաշրջանում 1.5 ՄՎտ առավելագույն հզորությամբ ամենամեծ արևային ջերմաէլեկտրակայանի կառուցումը: Բացի այդ, GEFF-ի հետ աշխատանքը մեզ հնարավորություն է տալիս ծանոթանալ միջազգային լավագույն փորձին, ինչպես նաև ներգրավված լինել միջազգային նախագծերում»:

Հայկ Շեկյան, Տնօրեն, **ՇՏԻԳԵՆ ՍՊԸ**

Սիրով պատրաստ ենք պատասխանել Ձեր բոլոր հարցերին:

GEFF-ը Հայաստանում
ՀՀ, ք. Երևան | Հանրապետության 62 փողոց, բն. 101
armenia@ebrdgeff.com | +374 10 542 721 | www.ebrdgeff.com/armenia